ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Ընդդեմ «Հրապարակ» թերթի՝ ՀՀ արդարադատության նախարարության բողոքի վերաբերյալ Դիտորդ մարմնի 2019թ. մարտի 19-ի փորձագիտական կարծիքին հավելում կատարելու մասին

ՀՀ արդարադատության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ-մամուլի քարտուղար Լուսինե Մարտիրոսյանը նամակ է հղել ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին՝ որոշ առարկություններ ներկայացնելով ընդդեմ «Հրապարակ» թերթի՝ ՀՀ արդարադատության նախարարության բողոքի վերաբերյալ Դիտորդ մարմնի 2019թ. մարտի 19-ի փորձագիտական կարծիքին:

Նամակում, մասնավորապես, նշվում է (մեջբերում ենք). «Փորձագիտական կարծիքում, ի թիվս այլնի, նշված է «(...) ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը համարում է, որ «օգտագործելով պետական միջոցները՝ ծառայողական ավտոմեքենա, վառելիք, վարորդ և այլն» ձևակերպումը կարող է որակվել ոչ թե փաստ, այլ հետևություն, որը բխում է նախորդ պնդումներից (...)»: Պնդում ենք, որ այդ հետևությունները սխալ տեղեկությունների վրա հիմնված հետևություններ էին, որոնք հերքելու պահանջով Արդարադատության նախարարությունը դիմել էր «Հրապարակ» օրաթերթին՝ իրացնելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով տրված իրավունքը: Մեջբերում լրագրողի պնդումից. «Դրա համար էլ նա աշխատում է քարոզարշավին զուգահեռ՝ օգտագործելով պետական միջոցները՝ ծառայողական ավտոմեքենա, վառելիք, վարորդ եւ այլն: Սա Զեյնալյանը ոչ միայն տարօրինակ չի համարում, այլեւ գտնում է «օրենքի տառին համապատասխան» հիմնավորումներ»: Արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանի՝ «տարօրինակ չհամարելու» պատասխանը վերաբերել է քարոզարշավին զուգահեռ աշխատելուն և ոչ պետական միջոցներն օգտագործելուն: Իսկ լրագրողի սխալ պնդումը հերքելու համար Արդարադատության

նախարարությունը դիմում էր ներկայացրել լրատվամիջոցին, ինչը վերջինի կողմից չի բավարարվել: Ելնելով վերոգրյալից, խնդրում ենք վերանայել համապատասխան փորձագիտական կարծիքը, որում նշված էր, որ «Դիտորդ մարմինը համարում է, որ «Հրապարակը» կարող էր մերժել հերքման պահանջը, քանի որ արդեն իսկ այդ պնդումները հերքվել են նախարարի խոսքում, և լրատվամիջոցը պահպանել է մյուս կողմի տեսակետը ներկայացնելու սկզբունքը» (մեջբերման ավարտը):

Քննարկելով նամակում բերված փաստարկները, **ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը որոշեց.**

- ընդդեմ «Հրապարակ» թերթի՝ ՀՀ արդարադատության նախարարության բողոքի վերաբերյալ Դիտորդ մարմնի 2019թ. մարտի 19-ի փորձագիտական կարծիքում 5-րդ կետից հետո ավելացնել 5.1 կետը՝ հետեւյալ ձեւակերպմամբ.

5.1. Այդուհանդերձ, առավել արհեստավարժ գործելակերպ կլիներ, եթե «Հրապարակը», հավատարիմ մնալով պատասխանի իրավունքի եւ արտահայտման ազատության սկզբունքներին, լսարանին ներկայացներ նաեւ նախարարի պաշտոնակատարի մեկնաբանությունները, որոնք վերաբերում են իր խոսքերից ոչ համարժեք եզրակացություններ կատարելուն:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2019թ. հունիսի 11-ի նիստում, Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, «Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական ընկերության հանրային կապերի պատասխանատու

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների

կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր գործունեությունները իրականացնում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրքով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: